

ՑԱՆԿ

**Արտահիվանդանոցային պայմաններում բուժման ենթակա ախտորոշումների և ախտաբանական վիճակների հիվանդանոցային բուժման
դեպքում ուղեգրման ցուցումների**

Արտանորթային և նյադաբանական	
Սրտի իշեմիկ հիվանդություն (I 25, I 25.0, I25.1, I25.2, 20, I25.9)	ա. Անկայուն կրծքահեղձուկ (ստենոկարդիա), բ. Առանց ST-բարձրացման սրտամկանի ինֆարկտ (ոչ-STԲՍԻ), գ. ST-բարձրացումով սրտամկանի ինֆարկտ (STԲՍԻ), դ. Սուր սրտային անբավարարություն, ե. Կյանքին վտանգ սպառնացող առիթմիաներ
Սրտային անբավարարություն (I 50, I 50.0, I 50.1 և I 50.9)	ա. Սրտային անբավարարության ախտանիշների հարաճուն կամ կտրուկ վատացում, առաջին անգամ սրտային անբավարարության ախտանիշների կամ նշանների առաջացում, բ. Քրոնիկ սրտային անբավարարության IV ԳՂ (NYHA), գ. Քրոնիկ սրտային անբավարարության I-IV ԳՂ (NYHA)՝ դեկոմպենսացիայի շրջան, դ. Սուր սրտային անբավարարության ցանկացած կլինիկական դրսևորման դեպքում (սուր դեկոմպենսացված սրտային անբավարարություն, թոքի սուր այուց, մեկուսացված աջ փորոքային անբավարարություն, կարդիոգեն շոկ)
Ուշագնացություն և կոլապս (R 55)	ա. Կարդիոգեն սինկոպեի դեպքում՝ կյանքի համար վտանգավոր առիթմիաների ժամանակ, բ. Այլ սինկոպենների դեպքում՝ տարբերակիչ ախտորոշում իրականացնելու համար

Չարկերակային գերճնշում (I 10, I 15)	Ծանր (3 աստիճան) գերճնշում՝ զուգակցված սուր սիմպտոմատիկ ԹՕԱ-ի հետ: Պահանջում է անհապաղ միջամտություն ԶԾ իջեցնելու համար, սովորաբար ներերակային թերապիայի միջոցով ա. Սուր ինսուլտ (հեմոռագիկ կամ իշեմիկ/թրոմբոլիտիկ) աղորտայի անևրիզմա կամ շերտազատում, բ. Սուր սրտային անբավարարություն, գ. Սուր կորոնար համախտանիշ, դ. սուր երիկամային անբավարարություն ե. Ֆեոխրոմոցիտոմայի կամ էկզոգեն սիմպատոմիատիկ նյութերի հետևանքով առաջացած գերճնշում, օրինակ՝ մետամֆետամին կամ կոկային թմրամիջոցների չարաշահումից կարող են առաջացնել զարկերակային ճնշման սուր և ծանր բարձրացում, որը կարող է հանգեցնել սուր ԹՕԱ-ի ախտանիշների զ. Հղիների գերճնշման ծանր ձևեր, այդ թվում՝ պրեէկլամպսիա/էկլամպսիա է. Չարորակ գերճնշում թրոմբոտիկ մկիրոանգիոպաթիայով կամ առանց դրա, երիկամների սուր անբավարարություն, որը բնութագրվում է երիկամների, ցանցաթաղանթի և ուղեղի փոքր զարկերակների ֆիբրինոլի նեկրոզով: Հիպերտոնիկ էնցեֆալոպաթիայով պացիենտների մոտ քնկոտության, անտարբերությամբ, տոնիկ-կլոնիկ գնցումների և կեղևային կուրության առկայությունը կարող են նախորդել գտակցության կորստին:
Այլ էնցեֆալիտ, միելիտ և էնցեֆալիտ, հետվարակային էնցեֆալիտ, էնցեֆալոմիելիտ, մանրէային մենինգոէնցեֆալիտ, մենինգոմիելիտ, Սուր դիսեմինացված (տարածուն) էնցեֆալիտ (G04.0, G04.2, G04 և G04.8)	Կյանքին վտանգ սպառնացող բարդություններ, գիտակցության մակարդակի անկում՝ կոմա
Դորսալգիա (մեջքացավ), բացառությամբ՝ հոգեծին դորսալգիայի (M54)	Ծողվածքի հետևանքով առաջացած դորսալգիայի ժամանակ, պացիենտը կարող է հոսպիտալացվել նյարդավիրաբույժի համապատասխան ցուցման դեպքում:

G44 -Գլխացավերի այլ համախտանիշներ, G44.0 2-Փնջային (կլաստերային, հիստամինային) գլխացավ, G44.2 3- Լարվածության գլխացավ, G44.3 4- Քրոնիկ հետվնասվածքային գլխացավ	Փնջային (կլաստերային, հիստամինային) գլխացավի ժամանակ՝ բարձր ճնշումով թթվածնային թերապիա իրականացնելու նպատակով:
G46 - Ուղեղանոթային համախտանիշեր՝ ուղեղի անոթային հիվանդությունների ժամանակ, G46.0 Միջին ուղեղային զարկերակի համախտանիշ, G46.3 Ուղեղաբնի ինսուլտի (կաթվածի) համախտանիշ, G46.4 Ուղեղիկային ինսուլտի (կաթվածի) համախտանիշ, G46.6 Միայն (զուտ, բացառապես) զգացողական լակունար համախտանիշ, G46.8 Գլխուղեղի այլ անոթային համ	Հոսալիտալացում՝ կյանքին վտանգ սպառնացող հնարավոր բարդությունների դեպքում

Դող՝ չճշտված, բացառությամբ՝ խորեայի՝ ԱՀՃ (G25.5) դող՝ առաջնային (G25.0), հիպոթերիկ (F44.4), մտադրված (G25.2) – (R25.1)	Սուր առաջացած դող կամ կռպիտ տատանողական շարժումներ վերջություններում և այլ ակամա շարժումներ՝ ուղեղի արյան շրջանառության սուր խանգարումները (ՈԲԱՇՄԽ) ժխտելու նպատակով: Անհայտ ծագման դող՝ ախտորոշելու նպատակով:
G50.0 - Եռորյակ (եռարմատ) նյարդի ներպղպիա	Ցավի՝ արտահիվանդանոցային պայմաններում անարդյունավետ կառավարման, անամենեզում ցրված սկլերոզ ունեցող պացիենտների մոտ՝ ցրված սկլերոզի սրացման, նյարդավիրաբուժական միջամտության անհրաժեշտության դեպքերում:

G35 - Յրված սկզբնական (կարծրախտ)	Նոր ակտիվ օջախի առկայություն, հին օջախի սրացում, չափի մեծացում կամ հարօջախային այտուցի առաջացում, պլանային կարգով ընդունվող որոշակի ինֆուզիոն դեղերի ստացում
F48- Այլ նևրոտիկ խանգարումներ , F48.0 Նևրաթենիա, F48.1 -Դեպերսոնալիզացիայի-դեմեալիզացիայի (ապաանձնավորման-ապաիրականացման) համախտանիշ, F48.8- Այլ ճշտված նևրոտիկ խանգարումներ, F48.9 Նևրոտիկ խանգարումներ՝ չճշտված	Հոսպիտալացման ցուցում կարող է հանդիսանալ արտահայտված հոգեախտաբանական ախտանիշների առկայությունը, արտահայտված սոմատո-վեգետատիվ ախտանիշները, սոցիալական գործունեության խաթարումը:

B 02 -) Գոտևորոդ որքին (herpes zoster), B 02.0-Գոտևորոդ որքին՝ Էնցեֆալիտի հետ, B 02.1-Գոտևորոդ որքին՝ մենինգիտի հետ, B 02.2 Գոտևորոդ որքին՝ նյարդային համակարգի այլ բարդություններով, B 02.3 Գոտևորոդ որքին՝ աչքի բարդություններով, B 02.7 -Դիսեմինացված (տարածուն) գոտևորոդ որքին, B 02.8 Գոտևորոդ որքին՝ այլ բարդություններով, B 02.9 Գոտևորոդ որքին՝ առանց բարդությունների	
G40 Էպիլեպսիա, G40.0 Տեղակայված (ֆոկալ, մասնակի, պարցիալ) իդիոպաթիկ էպիլեպսիա և էպիլեպտիկ համախտանիշներ՝ տեղակայված ցնցումներով սկիզբ ունեցող նոպաներով, G40.1 Տեղակայված (ֆոկալ, մասնակի, պարցիալ) ախտանիշային (սիմպտոմատիկ) էպիլեպսիա և էպիլեպտիկ համախտանիշներ՝ պարզ մասնակի նոպաներով Նոպաներ՝ առանց գիտակցության խանգարման (փոփոխության), G40.2 Տեղակայված (ֆոկալ, մասնակի, պարցիալ) ախտանիշային (սիմպտոմատիկ) էպիլեպսիա և էպիլեպտիկ համախտանիշներ՝ բարդ մասնակի (կոմպլեքսային պարցիալ) նոպաներով Գիտակցության խանգարումով ուղեկցվող նոպաներ՝ հաճախ էպիլեպտիկ ավտոմատիզմներով Երկրորդային տարածուն նոպաների վերածվող բարդ մասնակի նոպաներ, G40.3 Գեներալիզացված (համատարածուն) իդիոպաթիկ էպիլեպսիա և էպիլեպտիկ համախտանիշներ, G40.4 Այլ գեներալիզացված (համատարածուն) էպիլեպսիա	1. Առաջին անգամ ի հայտ եկած էպիլեպտիկ նոպա 2. Սերիական ցնցումներ 3. Պլանային բուժման անարդյունավետություն 4. Դեղորայքակայուն էպիլեպսիա 5. Գիտակցության մթազնում 6. Էպիլեպտիկ ցնցման ընթացքում ստացած վնասվածքի հետևանքով հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնության և սպասարկման, այդ թվում՝ վ

և Էպիլեպտիկ համախտանիշեր Էպիլեպսիա՝ ·
միոկլոնիկ արսանսներով · միոկլոնիկ-աստատիկ
նոպաներով Լենոքս-Գաստոյի (Lennox-Gastaut)
համախտանիշ «Սալամյան» գրոհներ (նոպաներ)
(Salaam) Ախտանիշային վաղ միոկլոնիկ
ԷնցեֆալոպաթիաՈւեստի (West) համախտանիշ,
G40.5 Հատուկ Էպիլեպտիկ համախտանիշներ
Էպիլեպսիա մասնակի անընդմեջ (Epilepsia partialis
continua, Կոժևնիկովի) Էպիլեպտիկ ցնցումներ
հետևյալ պատճառներից՝ · ալկոհոլ · դեղեր ·
հորմոնային փոփոխություններ · քնի զրկում ·
սթրեսային գործոնների ազդեցություն, G40.8
Էպիլեպսիայի այլ ձևեր Էպիլեպսիաներ և
Էպիլեպտիկ համախտանիշեր՝ առանց նոպաների
մասնակի (ֆոկալ) կամ զեներալիզացված
(համատարածուն) բնույթը ճշտելու, G40.9
Էպիլեպսիա՝ չճշտված Էպիլեպտիկ · ջղաձգումներ՝
ԱՀՃ* · նոպայաձև բռնկումներ, պարոքսիզմներ՝
ԱՀՃ · ցնցումներ՝ ԱՀՃ *ԱՀՃ- առանց հավելյալ
ճշտման

Գաստրոէնտերոլոգիա	
Աուտոիմուն հեպատիտ (K75.4)	հեպատիտի արտահայտված կլինիկական դրսևորումների, լյարդային ֆերմենտների խիստ բարձր մակարդակի, բարդությունների դեպքում
Լյարդի ալկոհոլային ցիրոզ, լյարդի այլ կամ չճշտված ցիրոզ (K70.3, K74.6)	բարդությունների դեպքում (արյունահոսություն, կոմայով կամ պրեկոմայով Էնցեֆալոպաթիա, հետապոռենալ համախտանիշ, սպոնտան բակտերիալ պերիտոնիտ) ցուցված է շտապ հոսպիտալացում
Լյարդի ֆիբրոզ կամ սկլերոզ (K74.0, K74.1, K74.2)	Երբ կլինիկական պատկերը հնարավոր չէ տարբերակել լյարդի ցիրոզից և նախնական ախտորոշվում է լյարդի ցիրոզ, որը կարող է հիվանդանոցային պայմաններում հետազոտման ընթացքում վերանայվել
Ստամոքսակերակրափողային ռեֆլուքս (K21, K21.0, K21.9, K22.1, K22.8, K22.9)	Արյունահոսություն, դիսֆագիայի հետևանքով առաջացած թերսնուցում

Խոցային պրոկտիտ, խոցային ռեկտոսիզմոդիտ և ձախակողմյան կոլիտ (K51.2, K51.3, K51.5)	Ծանր հիվանդության ակտիվության և բարդությունների դեպքում
Բարակ աղու չճշտված և այլ Կրոնի հիվանդություն (K50, K50.0, K50.8, K50.9)	միջին-ծանր հիվանդության ակտիվության և բարդությունների դեպքում (աղիքային անանցանելիություն, արյունահոսություն, թափածակման, թարախակույտի ձևավորման դեպքում կարող է լինել շտապ հոսպիտալացման ցուցում)
Սուր վարակային դիարեա (A02, A03, A04, A08)	ա. Կլինիկական ցուցումներ՝ հիվանդության բոլոր ծանր և բարդացած ձևերը անկախ տարիքից, սուր աղիքային վարակիչ հիվանդությունների միջին ծանրության դեպքերը ծանր կամ քրոնիկ ուղեկցող հիվանդություններով անձանց մոտ, հիվանդության ճգճգվող, քրոնիկ ձևերը սրացման դեպքում բ. համաճարակաբանական ցուցումներ՝ հակահամաճարակաբանական ցուցումներ՝ հակահամաճարակաբանական ռեժիմի պահպանման անհնարինությանը պացիենտի բնակության վայրում, ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 23-ի թիվ 347-Ն որոշման 2-րդ հավելվածով հաստատված ցանկում ներառված
Ստամոքսի մակերեսային գաստրիտ, քրոնիկատրոֆիկ , չճշտված գաստրիտներ (K29, K29.3, K30)	կիրառելի չէ
Ստամոքսի խոց, 12 մատնյա աղու խոց, դուոդենիտ (K25, K25.3, K25.7, K25.9, K26, K26.3, K26.9, K29.8)	Բարդությունների դեպքում (անգուսպ փսխումների հետևանքով ջրազրկում, թերսնուցման նշաններ)

Էնդոկրինոլոգիական	
Ինսուլինակախյալ շաքարային դիաբետ (E11, E11.2-E11.9)	ա. <u>Պլանային</u> - հիվանդության դեկոմպենսացիայի ժամանակ ինսուլինոթերապիայի դոզաների տրտրացիա, պոմպային ինսուլինոթերապիայի մեկնարկ/սկիզբ, դիաբետիկ նեյրոպաթիայի ցավոտ ձևի դեպքում հակաջղաձգային միջոցներով թերապիայի մեկնարկ, ցանկացած էթիոլոգիայի վերքի առկայություն, վերջույթի կրիտիկական իշեմիա ստորին վերջույթների զարկերակների հիվանդությամբ պացիենտների մոտ, նեֆրոտիկ համախտանիշի զարգացում և երիկամների ֆիլտրացիոն ֆունկցիայի զգալի նվազում, հիմնական հիվանդության, դրա բարդությունների և ուղեկցող հիվանդությունների կլինիկական նշանակալի վատթարացում, բարդությունների և համակցված վիճակների համապարփակ սկրինինգ բ. <u>Շտապ անհետաձգելի</u> - Դիաբետիկ կետոացիդոզ, պրեկոմատոզ վիճակ, դիաբետիկ կետոացիտոտիկ կոմա, հիպոգլիկեմիկ կոմա, լակտատ ացիդոզ, հիպերօսմոլյար հիպերգլիկեմիկ կոմա, հիպոգլիկեմիկ կոմա, որն ուղեկցվում է ապակոդմնորոշմամբ, շարժումների, խոսքի խանգարումով, ցնցումներով, գիտակցության խանգարումով, ՇԴ-ով պացիենտների կյանքին սպառնացող ցանկացած վիճակ:
Դիաբետիկ ռետինոպաթիա (E10.3, E11.3, E13.3, H36.0)	ա. <u>Պլանային հոսպիտալիզացիայի գուցումներ</u>- Դեղերի ինտրավիտրեալ ներարկումներին կամ վիտրեոռետինալ վիրաբուժական միջամտությունների կատարման անհրաժեշտության դեպքում, պրոլիֆերատիվ դիաբետիկ ռետինոպաթիա՝ մակուլայի շրջանում ինտենսիվ ենթահիպոիդ արյունահոսության առկայությամբ, տրակցիոն գործոնի առկայությամբ, պրոլիֆերատիվ դիաբետիկ ռետինոպաթիա, որը բարդանում է մասնակի հեմոֆթալմով, զուգակցված առաջնային հատվածի պրոգրեսիվող նեովասկուլյարիզացիայի հետ բ. <u>Անհետաձգելի հոսպիտալիզացիայի գուցումներ</u>- Էնդոֆթալմիտը որպես դեղորայքի ինտրավիտրեալ ներարկումների բարդություն
Ինսուլինակախյալ շաքարային դիաբետ՝ երիկամների ախտահարմամբ (E11.2, E14.2, E13.2, N18, N19)	ա. <u>Պլանային հոսպիտալիզացիայի գուցումներ</u>- Բեֆևոտիկ համախտանիշի առկայություն բ. <u>Շտապ անհետաձգելի</u> - անասարկա և (կամ) անուրիա
Դիաբետիկ նեյրոպաթիայով և ծայրամասային անոթների չճշտված հիվանդությունների վարում (E10.4, E11.4, I73.9, E13.4, G63.2)	ա. Ընդմիջվող կաղություն՝ ֆունկցիոնալության խանգարումով, իշեմիկ ցավեր հանգիստ վիճակում բ. Ստորի վերջույթների խոցոտում կամ փրթախտ

Ոչ շաքարային դիարետ (E22, E23.2, R63.1, N25.1)	<u>Պլանային հոսափտալիզացիայի գուցումներ -</u> ա. նեֆրոզեն ոչ շաքարային դիարետի ախտորոշումը հաստատելու և բուժման մարտավարությունը որոշելու անհրաժեշտություն, կամ հետազոտություն՝ ցերեկային ստացիոնարի պայմաններում, բ. Վիրաբուժական բուժման անհրաժեշտություն՝ հոսափտալացում նյարդավիրաբուժական բաժանմունք <u>Շտապ անհետաձգելի</u> ա. տեսողության կտրուկ ծավալվող վատթարացում բ. արտահայտված ջրազրկում գ. գլխուղեղի այտուցի նշաններ
Հիպոֆիզի գերֆունկցիա(E22, E22.1)	<u>Շտապ հոսափտալացման գուցումներ</u> ա. Տեսողության սուր կորուստը. բ. Հիպոֆիզի ապոպլեքսիա՝ տեսողության խանգարումներով գ. Ողնուղեղային հեղուկ արտահոսքի խանգարում դ. Հիպոֆիզի և ներզանգային գերճնշում, լիկվորեա
Թիրեոտոքսիկոզ (E05, E05.0, E05.1, E05.2, E05.3, E05.5, E05.8, E05.9)	<u>Պլանային հոսափտալիզացիայի գուցումներ՝</u> ա. Թիրեոտոքսիկոզի դեկոմպենսացիա բ. Էնդոկրին օֆթալմոպաթիյով բարդացած թիրեոտոքսիկոզի դեկոմպենսացիա <u>Շտապ և անհետաձգելի</u> ա. Թիրեոտոքսիկոզի բարդացած ձևեր՝ նախասրտերի ֆիբրիլացիա, սրտային անբավարարություն, թրոմբոէմբոլիկ բարդություններ բ. մակերիկամի անբավարարություն, թունավոր հեպատիտ, պարենխոմային օրգանների դեգեներատիվ փոփոխություններ, փսիպոզ, կախեքսիա և այլն գ. թիրեոտոքսիկ կրիզ (շտապ հոսափտացալում)
Հիպոթիրեոզ (E03, E03.3, E03.2, E03.8, E03.9, E89.0)	Վահանաձև գեղձի դիսֆունկցիա, երբ հնարավոր չէ բուժում իրականացնել արտահիվանդանոցային պայմաններում:
Թիրեոիդիտ (E06, E06.1-06.3, E06.9)	Արտահայտված ցավային համախտանիշ
Ալերգոլոգիա	

Էրիթեմա, ալերգիկ հպումային մաշկաբորբ (L51, L51.1, L51.8, L51.9, L23, L23.0, L23.6, L23.9)	ա. տարածուն ախտահարում բ. տեղային բուժման նկատմամբ կայունություն գ. Տարածուն վարակային բարդությունների զարգացում
Վազոմոտոր և ալերգիկ ռինիտ (J30, J30.0, J30.1- J30.4)	կիրառելի չէ
Սուր և խրոնիկ եղնջայտուց (L50.0, L50.3, L50.5, L50.6, L50.8, L50.9)	ա. Անաֆիլաքսիայի կասկածով տարածուն եղնջացան բ. Անոթային այտուցներ
Թորքաբանություն	
Բրոնխոէկտատիկ հիվանդություն (J47.9, J47.1, J47.0)	Բացարձակ ցուցումներ՝ ա. ցիանոտիկ և գիտակցության խանգարումներով պացիենտներ, բ. շնչառության հանախությունը 25/8-ից ավել, գ. սիրտ-թոքային անբավարարության նշաններ՝ արտահայտված հևոց, դժվարաշնչություն, հարաճուն ծայրամասային այտուց, SpO2<93% առանց թթվածնի, դ. կայուն տենդ՝ >38C, ե. բերանացի ներմուծվող դեղի անարդյունավետություն, զ. ուժեղ պլյուրալ ցավ, որն ընկճում է հազն ու խորխի դուրս բերումը, է. վիրահատական բուժում պահանջող դեպքեր՝ օջախային բրոնխոէկտազ, ախտանշանային բրոնխոէկտազ՝ չնայած դեղերով բուժմանը, թ. պրոֆուզ արյունահոսություն, կարող է կիրառվել նաև բրոնխային զարկերակի էմբոլիզացիա, Հարաբերական ցուցումներ՝ երկարատև ներերակային և ինհալյացիոն բուժում պահանջող դեպքեր:
Բրոնխիալ ասթմա J45.0	ա. տախիպնոե 30 և ավել ակտ/րոպե, բ. տախիկարդիա 120 զարկ/րոպե, գ. հավելյալ շնչառական մկանների ներգրավումով շնչառություն, դ. ոչ լիարժեք նախադասությունների արտաբերում, ե. հորիզոնական դիրքի անհնարինություն՝ դժվարաշնչության պատճառով, զ. սիստոլիկ զարկերակային ճնշման իջեցում 12մմ/սս ներշնչման ժամանակ, է. PEF ՝ արտաշնչման առավելագույն արագություն (ԱԱԱ) <50% արդյունքի դեպքում՝ եթե պացիենտն ի վիճակի է իրականացնել

Թոքերի խրոնիկ խցանող հիվանդություն (J40, J41-44, J68.4, T 65.2)	ա. ընդհանուր վիճակ. հեմոդինամիկ անկայուն վիճակ, բ. շնչական խանգարումներ. ծանր աստիճանի սրացում (հանկարծակի առաջացած հևոց, շնչառական անբավարարություն կամ ցիանոզի արտահայտվածություն, գիտակցության մթազնում, ծայրամասային այտուց, կենտրոնական ցիանոզ, կրծքավանդակի ստորին հատվածի ներքաշումներ, պուլսօքսիմետրիան 90% և ցածր, բարձր տախիպնոէ՝ 70 և ավել կամ բրադիպնոէ, պարբերական շնչառություն, գ. սիրտանոթային (հեմոդինամիկ) խանգարումներ. լուրջ բարդությունների առկայություն, ինչպես օրինակ՝ սրտային անբավարարություն կամ սրտի ռիթմի խանգարում, դ. ուղեկցվող հիվանդություններ. ծանր թերսնուցում՝ մարմնի զանգվածը ըստ հասակի ցածր է ավելի քան 3 ստանդարտ շեղում, միջին և ծանր անեմիա՝ հեմոգլոբինը ցածր 90 գ/լ-ից, այլ ծանր կամ սրացման փուլում քրոնիկ հիվանդություն (շաքարային դիաբետ, սրտային անբավարարություն, զարկերակային հիպերտենզիա և այլն):
Ուրոլոգիա	
Ցիստիտ (N30, N30.0-N30.4)	Երբ արտահիվանդանոցային պայմաններում բուժումը չի ունենում ակնկալվող արդյունք, երբ որոշում է կայացվում բուժել ռիսկի գործոն հանդիսացող պաթոլոգիան (օրինակ հեռացնել միզապարկի քարը, վերացնել օբստրուկցիան և այլն), երբ բորբոքային պրոցեսում ընդգրկվում են նաև վերին միզուղիները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ